ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/172

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.11.2018թ. թիվ 26-3/21051-18 գրությամբ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00907267) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.11.2018թ. թիվ 350 գրության հիման վրա, 15.10.2018թ. նախաձեռնել է «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ)

ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը 31.10.2018թ. թիվ 339 և 09.11.2018թ. թիվ 350 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար հանդերձանքի և անկողնային պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթում 32-րդ, 120-րդ, 123-րդ, և 129-րդ չափաբաժիններում հաղթող է ճանաչվել «Մադել» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր, համաձայն որի «Մադել» ՍՊԸ-ն «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին պետք է մատակարարեր 2,038,200 ՀՀ դրամի հանդերձանք և անկողնային պարագաներ, որից մատակարարվել է ընդամենը 123-րդ և 129-րդ չափաբաժիններով 339,000 ՀՀ դրամի ապրանք, իսկ մնացած 32-րդ և 120-րդ չափաբաժիններով նախատեսված 1,699,200 ՀՀ դրամի ապրանքի մասով «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից 19.09.2018թ. ներկայացվել է գնման հայտ, որտեղ նշվել է մատակարարման վերջնաժամկետ 01.10.2018թ. սակայն անտեսելով պայմանագրի 2.4.2 կետը՝ չի մատակարարել հայտով նախատեսված ապրանքը:

«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը 18.10.2018թ. թիվ 327 գրությամբ դիմել է «Մադել» ՍՊԸ-ին մեկ շաբաթվա ընթացքում կատարել հայտով պահանջվող ապրանքի մատակարարումը, որը նույնպես անտեսվել է: Ուստի, հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը՝ «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը 26.10.2018թ. միակողմանի լուծում է «Մադել» ՍՊԸ-ի հետ 30.05.2018թ. կնքած ՈԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ՆՏ պայմանագիրը»:

Պատվիրատուն պատշաճ կերպով ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>«ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2018թ. թիվ 26-3/20194-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/172 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.11.2018թ. թիվ 26-3/20194-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 31.10.2018թ. թիվ 339 և 09.11.2018թ. թիվ 350 գրությունները, «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքած ՈԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ՆՏ ծածկագրով գնման պայմանագիրը.

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի և «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքվել է ՈԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ՆՏ գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր)՝ ընթացակարգի 32-րդ, 120-րդ, 123-րդ, և 129-րդ չափաբաժինների մասով:

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

• 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

• 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

• 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

• 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

• 2.4.2 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

• 3.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2,038,200 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

• 5.1 կետի համաձայն՝ Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

• 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ

մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը՝ Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է մատակարարել հետևյալ անվանումներով ապրանքները.

- 32-րդ չափաբաժին. Շրջազգեստ ձմեռային,
- 120-րդ չափաբաժին. Բաճկոն աշնանային,
- 123-րդ չափաբաժին. Հողաթափ կանացի,
- 129-րդ չափաբաժին. Ներքին սպիտակեղեն (տղամարդու):

Նույն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի մատակարաման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման պահից մինչև 15.12.2018թ.՝ Պատվիրատուի գնման հայտի հիման վրա:

18.10.2018թ. թիվ 327 գրությամբ Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել է ծանուցում, որում վերջինս նշել է, որ «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից 19.09.2018թ. ներկայացվել է հայտ, որում մատակարարման վերջնաժամկետ է նշվել 01.10.2018թ. և մինչ այդ օրը ապրանքը չի մատակարարվել: Պատվիրատուն նաև նախազգուշացրել է Ընկերությանը, որ նշված ապրանքը մեկ շաբաթվա ընթացքում չմատակարարելու դեպքում վերջինս կձեռնարկի միջոցներ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժն ու տուգանքը գանձելու ուղղությամբ:

26.10.2018թ. թիվ 334 գրությամբ Պատվիրատուն կրկին դիմել է «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին՝ նշելով, որ «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար հանդերձանքի և անկողնային պարագաների ձեռքբերման նպատակով «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, համաձայն որի «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին պետք է մատակարարեր 2,038,200 ՀՀ դրամի հանդերձանք և անկողնային պարագաներ, որից մատակարարվել է ընդամենը 339,000 ՀՀ դրամի ապրանք, իսկ մնացած 1,699,200 ՀՀ դրամի ապրանքի մասով «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից 19.09.2018թ.

ներկայացվել է գնման հայտ, որտեղ նշվել է մատակարարման վերջնաժամկետ 01.10.2018թ., սակայն չի մատակարարվել և չի ձեռնարկվել որևէ քայլ: Միաժամանակ Պատվիրատուն տեղեկացրել է «ՄԱԴԵԼ»-ին, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի պահանջը՝ «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿը միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը 26.10.2018թ. Պատվիրատուն հրապարակել է նաև www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է

կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն 30.05.2018թ. «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի հետ կնքել է ՆԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ՆՏ գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր)՝ 2,038,200 ՀՀ դրամ ընդհանուր գնով, որից սակայն մատակարարել է ընդամենը 339,000 ՀՀ դրամի ապրանք, ինչը հանգեցրել է մնացած 1,699,200 ՀՀ դրամի ապրանքի մասով «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ն 30.05.2018թ. կնքված ՆԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/8-Ե-Մ-ՆՏ պայմանագրով նախատեսված ապրանքները Պայմանագրով նախատեսված ծավալով և ժամկետներում չմատակարարելով՝ խախտել է նույն պայմանագրով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ԱՐԳՈՀՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.11.2018թ. թիվ 26-3/21051-18 գրությամբ «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00907267) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՄԱԴԵԼ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ